«ՁՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՐՎԵԺ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ДЕТСКИЙ САД ДЖРВЕЖА ОБЩИНЫ ДЖРВЕЖ» ДУЗ НОО

«JRVEZH KINDERGARDEN» PEI CNCO

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ձրվեժ համայնքի Ձրվեժ գյուղ,34-րդ փողոց, թիվ 9,
jrvezh.mankapartez@gmail.com, հեռ.՝ 022250510

N41 06 դեկտեմբեր 2023թ

06.12.2023թ

«Հայկազունք» ՍՊԸ-ին

Տնօրեն՝ Կ.Մացակյան

Հասցե՝ ՀՀ ք .Երևան, Աջափնյակ,16Թղմ,18,Բն.41

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ Կ. Մացակյան

«Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ –ի և «Հայկազունք» ՍՊԸ-ի միջև 2023թվականի հուլիսի 13-ին կնքվել է սննդամթերքի մատակարարման ԿՄՁՀՁԳՄՆՈՒՀ- ԳՀԱՊՁԲ - 23/1 ծածկագրով գնման պայմանագիրը:

Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2023թվականի դեկտեմբերի 30-ը:

«Հայկազունք» ՍՊԸ-ն սննդամթերքի մատակարարումն իրականացրել է մինչև 2023թ-ի նոյեմբերի 16-ը:

Նոյեմբերի 21-ին ուղարկվել է սննդամթերքի պատվեր, որի մատակարարումը մինչև այսօր չի իրականացվել:

Հաշվի առնելով «Հայկազունք» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտականությունների չկատարումը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 և 8.9 կետերը, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ը միակողմանի լուծում է ԿՄՁՀՁԳՄՆՈՒՀ- ԳՀԱՊՁԲ - 23/1 ծածկագրով գնման պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները՝

«Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ –ը միակողմանի լուծում է պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ ԿՄՋՀՋԳՄՆՈՒՀ- ԳՀԱՊՁԲ - 23/1 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում 226,532/երկու հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր երեսուներկու/ՀՀ դրամ, և որակավորման ապահովման գումարը կազմում է 339,798 /երեք հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր իննսունութ/ՀՀ դրամ որն անհրաժեշտ է վճարել գնորդի բանկային 1570089895250100 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ մինչև 2023թ. դեկտեմբերի 14-ը ներառյալ որակավորման և պայմանագրի ապահովումները համապատասխանաբար փոխանցումը պետք է կատարել գնորդի վերը նշված հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել «Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն <<Հայկազունք>> ՍՊԸ-ի գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Տեղեկացնում ենք, որ ԿՄՋՀՋԳՄՆՈՒՀ- ԳՀԱՊՁԲ - 23/1 ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված և պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, ծանուցումը տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

«Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի

Տնօրեն՝ Լ. Սահակյան